կանոք կրելով շուրջառ և սեւացեալ մոմեղէնս, եկեալ հաւաքեալ ի հրապարակն Մէյտան կոչեցեալ, որ ի Մեծն Մէյտան թաղին, կատարեցին անդ թափօր անիծողական, մեծաւ հանդիսիւ, կուտելով նզովս և անէծս ի վերայ ազնիւ տոհմին Շահրիմանեանց, և ի հարցանել պարսից թէ զինչ գործէին, անամօթաբար պատասխանէին թէ որպէս դուք զՅոննի հերձուածողն, նոյնպէս և մեք զմեր հերձուածողն նզովելով նզովեմք։ Այս տխուր պատահար տեղի կալաւ յամին 1659։

Ցեսեալ Շահրիմանեանց զդառն հակառակութիւն հայրենակցացն իւրեանց, լքեալ զՆոր–Ջուղա, հեռացան և գնացին պանդխտել յօտար երկիրս, այն է՝ ի Հնդիկս, Յիտալիա, ի Հոլանտա, յԱւստրիա և ի Ռուսաստան։

Զգտանին այսօր ի Նոր–Ջուղա սերունդք և շառաւիղք Շահրիմանեանց, միակ յիշատակ նոցա որ դեռ կայ և մնայ անդ, է հոյակապ քարաշէն բաղանիքն որ ի թաղն Մեծ Մէյտան, կառուցեալ արդեամբք և ծախիւք բարեպաշտ կնոջ ուրուք ի Շահրիմանեան պայազատ տոհմէն, 300 ամօք յառաջ։

Կայ անդ ի Մատրաս Շահրիման ոմն որ յաճախէ յեկեղեցի Հայոց և ի ծերութեան հասակի սկսեալ է ուսանել զլեզու բարեյիշատակ նախահարցն։ Ի սրահի եկեղեցւոյն Հայոց որ ի Մատրաս, գտանի փառաւոր շիրիմ «Ամենապայծառ Յովհաննիսի կոմսին Շահրիմանեանց», որ զրաւեցաւ ի կենաց ի 5 Ապրիլին, 1848 ամին, ի հասակի 75 ամաց։ Եկեալ էր նա ի Մատրաս ի Վիեննայէ, որպէս պատմեաց ինձ, 40 ամօք յառաջ, ի Ցէր հանգուցեալ բարեկամ իւր Գրիգոր Սամ, որ էր թոռն Սեթայ Սամեան[1] և հնագոյն հայ բնակիչ Մատրասի։

«Ամենապայծառ Կոմսն Յովհաննէս Շահրիման» յընթացս երեսնամեայ բնակութեանն ի Մատրաս թէպէտեւ յաճախեալ էր յեկեղեցիս կաթոլիկաց, այլ չէր բնաւ հաղորդեալ արեան և մարմնոյ Կենարարին յեկեղեցւոջ նոցա, և յորժամ մեռաւ անհաղորդ, արքեպիսկոպոսն կաթոլիկաց բացէ ի բաց մերժեաց թաղել զնա, և թէպէտեւ խոստացան ազգականք Կոմսին վճարել արքեպիսկոպոսին մի հազար ռուփեաց վասն տեղագնոյ յեկեղեցւոջ կաթոլիկաց, այլ նա դարձեալ մերժեաց, ասելով, եթէ վճարեսցեն նոքա զամբողջ հարստութիւն նորա, դեռ չկարեն թաղել տալ զկոմսն մեծահարուստ ի ձեռն կաթոլիկ քահանայից։ Անճարացեալ ազգականացն գնան և դիմեն վիճակաւոր քահանային Մատրասի հայոց որ ամենայն սիրով և յօժարութեամբ յանձն առնու թաղել զննջեցեալն ի սրահի եկեղեցւոյն Մատրասի, և շնորհապարտ ազգականք Կոմսին նուիրեն բարեմիտ քահանային զգումարն 200 ռուփեաց։

* * *

Ի գիտութիւն բանասիրաց չմոռանամ յիշել աստանօր թէ ի բազում ամաց հետէ

չար հօրն մերոյ սրբոյ Լուսաւորչին, զի հզօր կուսակիցք Նահապետի մատնեցին զկաթողիկոսացուն Ստեփաննոս ի ձեռս պարսիկ իշխանին որ Նատէրն յԵրեւան, որ կալեալ զնա արկ ի բանտ խաւարին, ուր յետ բազում խոշտանգանաց վճարեաց զկեանս իւր ի 4 Յունուարին, 1698 ամին։ Որք փորեն զուր վասն այլոց, անկանին ի նմին ինքեանք վաղ կամ անագան։ Վարեաց Նա ըզպաշտօն առաջնորդութեան վանացն Ամենափրկչեան ի Նոր–Ջուղա ի 1634 ամէն ցամն 1697։

1. Սէթ Սամ, ականաւոր հայ վաճառական ի Մատրաս, որ երբեմն «փառաց մեր մայր» կոչէր, էր պաշտպան և աշխատակից «Ազդարար» անդրանիկ լրագրոյն ազգիս, որ հրատարակեցաւ ընդ խմբագրութեամբ Տէր Յարութիւնի Շմաւոնեան Շիրազեցւոյ, ի 1794 ամէն ցամն 1796ի Մատրաս։ Վաճառական զրազէն զրէր ոտանաւոր բանս խրատական ընդ «Բարեկամ» կեղծ անուամբ։ Մեռաւ յամին 1848, յ19 Յունիսի, ի հասակի 77 ամաց, ողբացեալ յամենեցունց, մանաւանդ ի զրական հին բարեկամէն իւրմէ ի Մեսրովբայ Թաղիադեանց որ զրեաց և հրատարակեաց յիւրում «Ազգասէր Արարատեան» լրագրին երկար ողբ մի սրտառուչ և գեղեցիկ ի լեզու ոսկեղէն, ընդ վերնագրաւն «Ողբ ի Սէթ Սամ», յորում քերթողն անզուգական, ի միջի այլոց, զրուատէ զՍէթ Սամ, այսպէս.

«Ընդ իս ողբայ, եթէ դեռ կայ Յակոբ Շահան Ջրպետեան,
Որ յեզերաց Հռոն գետոյ առ սէր եղեւ ապաստան.
Վասն ազգիս և հայրենեաց, որով թուիմ թէ եհաս
Ազգածարաւ հայրենասէր սրտին անյագ բաղձանաց»։